

2014թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
(ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՍՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Թեմայի անվանումը

ՀՀ գիտակրթական համակարգի ռեսուրսային բազան, ինովացիոն-կոմունիկացիոն ապահովվածությունը և ոլորտում ներդրումային միջավայրի ու ներուժի զարգացման գերակայությունները

Թեմայի իրականացման համար նախատեսված ժամանակահատվածը

1 ՏԱՐԻ

Հաշվետու ժամանակահատվածը

01.01.2014թ. - 31.12.2014թ.

Թեմայի ղեկավարը

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ ՄԻՔԱՅԵԼԻ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Թեմայի մասնակիցներ

1. Խաչատրյան Վիլեն Վիկտորի – գիտաշխատող
2. Սարգսյան Վարդան Ալբերտի – գիտաշխատող
3. Հարությունյան Վլադիմիր Լիպարիտի – գիտաշխատող
4. Քոչարյան Մարիանա Ռաֆիկի – կրտսեր գիտաշխատող

Ծրագրի համառոտ բովանդակությունը

ՀՀ գիտակրթական համակարգում նյութատեխնիկական բազան՝ լաբորատոր սարքավորումների և գործիքների առկայությունը, դրանց արդիականությունը, փորձարարական հնարավորությունները, ինովացիոն-կոմունիկացիոն և կադրային ապահովվածությունը հեազոտելու և գնահատելու նպատակով իրականացվելու են համատարած և ընտրանքային ուսումնասիրություններ, կատարվելու են միջազգային փորձի հետ համադրական վերլուծություններ: 2013 թվականի ընթացքում մշակվելու են

այդպիսի ուսումնասիրությունների համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվության հավաքման, մշակման և ընդհանրացման եղանակները և սկզբունքները, հայրենական ցուցանիշների և միջազգային փորձի համադրական վերլուծության, ոլորտի տեխնիկական վերազինման համար անհրաժեշտ ռեսուրսների պահանջարկի գնահատման մեթոդաբանությունն ու մոդելները:

Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը

Գիտակրթական համակարգի բնականոն զարգացման համար ֆինանսավորման աղբյուրների թվում, պետական բյուջետային միջոցների հետ մեկտեղ, թեև դանդաղ, սկսել են աճել գործարարությունից և դրամաշնորհային ծրագրերից ստացվող ռեսուրսները: Այս գործընթացը ակտիվացնելու, գիտական գաղափարների առևտրայնացումը խթանելու նպատակով անհրաժեշտ է բարեփոխել ոլորտի ներդրումային միջավայրը, ինչը կնպաստի տնտեսության նորամուծական զարգացմանը, նորամուծությունների համար ներդրումների ներգրավմանը:

Ընդհանուր առմամբ, հետազոտության արդյունքներով հնարավոր կլինի համակողմանի գնահատել հանրապետության գիտակրթական համակարգի տեխնիկական զինվածության մակարդակի արդիականացման, ինովացիոն-կոմունիկացիոն ապահովվածության զարգացման ֆինանսական, ներդրումային, կադրային, կազմակերպական գերակա ուղղություններն ու ռեսուրսները:

Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները

Տնտեսության նորամուծական զարգացմանն է միտված ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 17-ի որոշմամբ հաստատված «Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգը», որը բովանդակում է ինովացիոն ազգային համակարգը, դրա ձևավորման հիմնադրույթները: Այդ համակարգի առանցքային բաղադրիչներից են գիտությունը և կրթությունը, որոնց զարգացման նախադրյալները գանազան ուսումնասիրություններում կարևորվել են ֆինանսական ռեսուրսների անբավարարությունը, մակրո և միկրոմակարդակներում կառավարման ու պետական կարգավորման անկատարությունները:

Մասնավորապես, գիտակրթական համակարգի զարգացման հիմնախնդրի գիտական մշակման նախորդ փուլերում, սույն հայտի հեղինակային խումբը մշակել է

տնտեսական զարգացման վրա այդ համակարգի ներազդեցության գնահատման մեթոդաբանությունը, բնութագրել կրթության և գիտության զարգացման ընթացքը ՀՀ-ում, դրանց՝ տնտեսության հետ ինտեգրման աստիճանը, բացահայտել այդ բնագավառների բարեփոխումների գերակա ուղղությունները, հետազոտել գիտակրթական համակարգի կառավարման կազմակերպական կառուցվածքների տարբերակներ մակրո և միկրոմակարդակների կտրվածքով՝ ըստ կառավարման մակարդակների և ֆունկցիոնալ ստորաբաժանումների լիազորությունների ու գործառույթների ծավալի հստակեցմամբ, ինչպես նաև տնտեսության և գիտակրթական համակարգի կառավարման ասպարեզում ժամանակակից տեղեկատվական համակարգերի կիրառման սկզբունքները և մոդելները: Նշված արդյունքները արտացոլվել են հեղինակային խմբի հրատարակած երկու մենագրություններում և երեք հոդվածներում: Մինչդեռ ըստ պատշաճի չեն հետազոտվել գիտակրթական համակարգի զարգացման համար խիստ էական ռեսուրսային բազան, ինովացիոն-կոմունիկացիոն ապահովվածությունը, ոլորտի ներդրումային միջավայրի և ներուժի զարգացման գերակա ուղղությունները: Հայտնի է, որ խիստ արդիականացման կարիք ունեն գիտական և կրթական հաստատությունների լաբորատոր սարքավորումները և փորձարարական բազան, միջտ չէ, որ ապահովված է մուտք դեպի անհրաժշտ ինֆորմացիոն ռեսուրսներ, գրադարանները ապահովված չեն նոր հրատարակություններով, անբավարար են էլեկտրոնային ռեսուրսները և այլն: Բարենպաստ չէ ոլորտի ներդրումային միջավայրը, չեն գործում գիտական արդյունքների առևտրայնացման արդյունավետ կառուցակարգեր, չկան անհրաժեշտ վենչուրային ֆինանսական կառույցներ:

Գիտական աշխատանքի արդյունքները ներկայացվելու են իբրև թեմայի կատարման հաշվետվություն, հրապարակված գիտական հոդվածներ, զեկուցումներ գիտաժողովներում: